



«Անելիք բանկ հաշվարկային տոկոսադրույք» (ԱԲՀՏ)

2018 թվականի 1-ին եռամսյակի համար

Արժույթ	ԱԲՀՏ	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	11.2%	31.03.2018
ԱՄՆ դոլար	7.0%	31.03.2018
Եվրո	4.5%	31.03.2018

ԱԲՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները ըստ արժույթների

ՀՀ դրամ

ԱԲՀՏ = 1/5 Վերաֆինանսավորման տոկոսադրույք + 4/5 Բանկի ավանդի տոկոսադրույք + Հավելյալ բաղադրիչ

Որտեղ՝

- **Վերաֆինանսավորման (Ռեպո) տոկոսադրույք** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանվող Վերաֆինանսավորման (Ռեպո) տոկոսադրույք:
Վերաֆինանսավորման տոկոսադրույքը մշտապես հրապարակվում է ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայքում (www.cba.am)
- **Բանկի ավանդի տոկոսադրույք** – Բանկի կողմից ֆիզիկական անձանց համար սահմանվող և հրապարակվող 366-730 օր ժամկետով "Ապահով" (տեսակը՝ առանց ավելացման իրավունքի, ժամկետի վերջում տոկոսների վճարմամբ) անվանատեսակով ավանդի տոկոսադրույքը:
- **Հավելյալ բաղադրիչ** - սահմանվում է Ն(ԱՊ) կոմիտեի կողմից որպես տոկոսային մեծություն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ժամկետային ավանդների և վարկերի տոկոսադրույքների փոփոխությունները և առկա միտումները, ՀՀ տնտեսական ցուցանիշները՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ վիճակագրության ծառայության կողմից

հրապարակված նյութերի, մասնավորապես հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության զարգացումները, ինչպես նաև միջազգային շուկաների փոփոխությունները:

ԱՄՆ դոլար, Եվրո

ԱԲՀՏ= Բանկի ավանդի տոկոսադրույք + Հավելյալ բաղադրիչ

Որտեղ՝

- **Բանկի ավանդի տոկոսադրույք** – Բանկի կողմից ֆիզիկական անձանց համար սահմանվող և հրապարակվող 366-730 օր ժամկետով "Ապահով" (տեսակը՝ առանց ավելացման իրավունքի, ժամկետի վերջում տոկոսների վճարմամբ) անվանատեսակով ավանդի տոկոսադրույքը:
- **Հավելյալ բաղադրիչ** - սահմանվում է Բանկի Ներդրումային (ակտիվների կառավարման) կոմիտեի կողմից որպես տոկոսային մեծություն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ժամկետային ավանդների և վարկերի տոկոսադրույքների փոփոխությունները և առկա միտումները, ՀՀ տնտեսական ցուցանիշները՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ վիճակագրության ծառայության կողմից հրապարակված նյութերի, մասնավորապես հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության զարգացումները, ինչպես նաև միջազգային շուկաների փոփոխությունները:

ԱԲՀՏ-ի սահմանումը

ԱԲՀՏ-ն սահմանվում է Բանկի Ներդրումային (Ակտիվների և պասիվների) կոմիտեի կողմից յուրաքանչյուր եռամսյակի համար և հրապարակվում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

- ԱԲՀՏ-ն կարող է արտահերթ կերպով վերանայվել, եթե վերջին հաստատված ԱԲՀՏ-ի հետո տեղի են ունեցել հետևյալ փոփոխություններ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Վերաֆինանսավորման (Ռեպո) տոկոսադրույքի աճ/նվազում 1%-ային կետ:
- Բանկի կողմից սահմանվող և հրապարակվող ավանդների տոկոսադրույքների աճ/նվազում 1%-ային կետ: